Հավելված 5

Կրթական ծրագրերի փորձաքննության արդյունքների ամփոփում

(Մ. Ճաղարյան)

Մասնաճյուղի 2019-2023թթ. բակալավրի 2 կրթական ծրագրերը՝ «Ռուսաց լեզու և գրականություն» և «Հոգեբանություն», մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար պարոն Մակարյանի գրությամբ և ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր տիկին Է.Ասրիյանի հանձնարարականով 2019թ. դեկտեմբերին արտաքին փորձաքննություն են անցել ԵՊՀ համապատասխան ֆակուլտետներում։

«Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագիրը փորձաքննություն է անցել ռուս բանասիրության ֆակուլտետում և փորձաքննության վերաբերյալ ստացվել է ռուս գրականության ամբիոնի վարիչ, «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի ղեկավար Լ.Գ.Հակոբյանի ստորագրությամբ եզրակացությունը։ Եզրակացության մեջ նշվել է, որ ծրագիրը մանրամասն նայվել և քննարկվել է ռուս գրականության ամբիոնում և արժանացել դրական կարծիքի։ Ըստ եզրակացության ծրագիրն ամբողջությամբ համապատասխանում է բակալավրի կրթական ծրագրին ներկայացվող պահանջներին, հստակ ձևակերպված են կրթական վերջնարդյունքները, մասնագիտական կառուցամասը ներառում է երկու հիմնական՝ բանասիրական և մանկավարժական մասերը, ներառված առարկաները ներկայացնում են ժամանակակից ռուսաց լեզվի բոլոր հիմնական կառուցվածքային մակարդակները, ինչպես նաև ռուսերենի ոճաբանությունը, ներառված են առարկաներ, որոնք կնպաստեն ուսանողի մոտ բանասիրական մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, մասնավորապես կարևորվել է «Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում» դասընթացի առկայությունը, որը կնպաստի ուսանողների ուղղագրական հմտությունների զարգացմանը։ Եզրակացության մեջ ներառված են մի քանի առաջարկներ, որոնք ըստ փորձագետների տեխնիկական

բնույթի են և չեն խաթարում մասնաճյուղի մասնագիտական աշխատանքային խմբի կողմից մշակված կրթական ծրագրի դրական տպավորությունը։

«Հոգեբանություն» կրթական ծրագիրը արտաքին փորձաքննություն է անցել ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2 ամբիոններում՝ սոցիալական և կլինիկական հոգեբանության ու ընդհանուր հոգեբանության ամբիոններում։ Ծրագրի վերաբերյալ իր եզրակացությունն է գրել սոցիալական և կլինիկական հոգեբանության ամբիոնի վարիչ Գ.Մ.Շահվերդյանը։ Նա մասնավորապես նշել է, որ ծրագիրը կազմված է լիարժեք և գրագետ, ներառված են կրթական ծրագրին ներկայացվող բոլոր բաժինները, դասընթացների նկարագրիչները համապատասխանում են պահանջներին, կարևորել են 2-րդից 4-րդ կուրսերի համար ներառված պրակտիկաները։ Փորձագետի կողմից կատարվել են նաև մի քանի կարևոր և էական առաջարկներ։ Նա նշել է, որ ծրագրում ընդգրկված դասընթացները համապատասխանում են ծրագրի վերջնարդյունքներին։

«Հոգեբանություն» կրթական ծրագրի վերաբերյալ իր եզրակացությունն է ներկայացրել նաև ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ Հ.Մ.Ավանեսյանը։ Նա նույնպես նշել է, որ ներկայացված կրթական ծրագիրն իր կառուցվածքով համապատասխանում է բակալավրի կրթական ծրագրին ներկայացվող պահանջներին, ներառված դասընթացները համապատասխանում են կրթական ծրագրի վերջնարդյունքներին, դասընթացների նկարագրիչները ամբողջական են, լավ են ընտրված ուսումնական պրակտիկաների ժամկետները, և բոլորը բաշխված են ըստ համապատասխան կրեդիտների, ուսումնական բեռնվածության և կիսամյակների, պահպանված են գնահատման ձևերը և այլն։ Ամբիոնի վարիչը եզրակացության մեջ դրական կարծիք է արտահայտել մասնաճյուղի «Հոգեբանություն» կրթական ծրագրի վերաբերյալ։ Ամբիոնի վարիչի կողմից կատարվել են մի շարք կարևոր և էական առաջարկներ։

Նշված երկու կրթական ծրագրերի արտաքին փորձաքննության արդյունքները 2020թ. հունվարին քննարկվել են համապատասխանաբար մանկավարժության և հոգեբանության ամբիոնում և օտար լեզուների ամբիոնում: «Հոգեբանություն» կրթական ծրագրի պատասխանատու պ-ն Լ.Սարգսյանը ներկայացրել է իր տեսակետը ծրագրի փորձաքննության արդյունքների վերաբերյալ, ապա ամբիոնը որոշել է հաշվի առնելով այդ արդյունքները վերանայել ծրագիրը և 2020-2024թթ. կրթական ծրագրում ներառել համապատասխան փոփոխությունները:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի վարիչ Մ.Ճաղարյան

22.02.2020թ.